

յորսոյ՝ գային անկանէին ի մոխիրն. եւ ձեր տուեալ զխնդիրն՝ խնդալով յուղարկէիք¹, պարգեւելով գահ եւ պատիւ եւ զայլոց² գտունս եւ զկեանս եւ զմեծութիւնս. եւ նոցա սակաւ մի խոյս եղեալ ի ձեռք, լռեցից զայլ մեծամեծ թշնամանս, որով թշնամանէին զկրակն յիւրաքանչիւր ի տունս՝ այլ դատս եւ նախատինս³ աւելորդ աղտոյ իւրեանց զկրակն առնէին: 8 Եւ վասն զի զայս գիտէ ամենայն ոք, եւ յայտնի է, զի ամենայն արուեստաւոր, որ զիւր⁴ արուեստն ինքն գիտէ եւ աւգտեալ է յարուեստէն՝ զնոյն եւ որդւոց իւրոց կամի ուսուցանել, զի կեցցեն. եւ այնպիսի խաբէքայ մարդկան ծանուցեալ, թէ ոչ իմաստիւ եւ քաջութեամբ կեցեալ եւ մեծացեալ, այլ սուտ վաճառակաւորութեանն մոխրով՝ զնոյն փութային եւ որդւոցն իւրեանց ուսուցանել: 9 Վասն որոյ բարձեալ էր յաշխարհէն Զայոց եւ կորուսեալ վաստակք, միտք⁵, քաջութիւն, տոհմակութիւն⁶ եւ արդարութիւն⁷. եւ ի մեջ անցեալ⁸ փերեւերտին դէմքն այդր ամենայնի⁹. եւ ձեր Արեաց տեսանելով զայն ամենայն, եւ չծանուցեալ, թէ մեր զայն հրահանգ եղեալ նոցա, եւ թէ չեն ուսեալ ինչ եւ չգիտեն¹⁰՝ չեն մեղադրելի, այլ եւ յատենի եւս այպանելով՝ ամենայն վատաց եւ ի կռուոյ յետնելոյ զԶայս ածելիք արիւնակ, նախ Ասորոց, ապա լբելոց, ապա լուծելոց, ապա անդամալուծաց: 10 Եւ բայց թէ ապա եւ որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խարող¹¹ հացկատակաց ջոկն էր՝ եւ ոչ կորացեալ մտաներ ընդ գետին. վասն նոցա եւ խնդութիւն եւս թուեր այնպիսի լուրն: 11 Այլ որ մարդ էր, եւ ամաւթ կայր ի սրտի, եւ զայնպիսի բանս յԱրեաց տեսնեն լսեր՝ ոչ միայն միանգամ եւ երկիցս եւեթ ի դէպ էր մեռանել, այլ թէ եւ տասն անգամ կեայր, եւ հասապագ զնոյն լսեր՝ տասն անգամ արժանի էր մեռանել:

12 «Վասն որոյ եւ մեք իբրեւ զխորհուրդս զայս ի միտ արկեալ իշխեցաք խորհել, եւ զայդպիսի ծաղանաց բանս, որ ի վերայ աշխարհիս եղեալ էր Արեաց տեսնեն եւ կայր ի նմին հաստատեալ. եւ թէպէտ ածաք զմտաւ երթալ ըստ աշխարհ ելանել եւ կորնչել, ճանաչելով զԱրեաց ոյժ եւ զբազմութիւն,-

1 SS. ուղարկէիք

2 SS. այլոց

3 Զ. դատս եւ նախատինս. «Թուի այլազգ ինչ ընթեռնի» (ծնթ. ԲԳտ.):

4 ԶԱտ. ամենայն արուեստաւորք զիւր. ԲԳտ. ուղղագրել են ամենայն արուեստաւոր ոք զիւր

5 SS. եւ միտք

6 SS. տոհմակութիւն

7 ԶԱտ. տոհմակութիւն, արդարութիւն

8 Զ. ի մեջ անցեալ

9 Թերեւս՝ ընդդէմքն այդր ամենայնի (Լ. Բ.)

10 SS. չեն ուսեալ ինչ՝ չգիտեն

11 Խարող-ի մասին ԲԳտ. ունին ծնթ. «Գուցէ խորող կամ խաբող». թերեւս ուղղելու է (ՂԲ 9-10) անդամալուծաց, եւ ապա եւ որ նոցա իսկ նման մարդ էր: Բայց (թէ) որ ձեր խարող (?) հացկատակաց ջոկն էր՝ ոչ կորացեալ մտաներ եւն: